ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 89
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
28-ը ապրիլի 2026թ.

Նիստը անցկացվել է հարցման միջոցով, որին մասնակցել են գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Գիտական խորհրդի նիստի նախագահն էր ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Օրակարգում եղել է հետևյալ հարցը.

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս Վլադիմիր Պողոսյանի կողմից ներկայացված «Խորհրդային և հետխորհրդային քաղաքն ու նրա զարգացման հիմնախնդիրները 1950–2020-ական թվականներին (Իջևանի քաղաքավերածման և հետխորհրդային փոխակերպման օրինակով)» թեմայով գիտական նախագծի համապատասխանության և «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին ներկայացնելու նպատակով երաշխավորման հարցը։

Նախագիծը(հավելված 1) ներկայացվել է գիտական խորհրդի անդամներին նախապես՝ էլեկտրոնային եղանակով, և կազմակերպվել է քվեարկություն հարցման միջոցով։

Հարցի վերաբերյալ առաջարկներ չեն եղել։

Բաց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ N 89/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 12-րդ կետի 2-րդ ենթակետով, 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Համարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս Վլադիմիր Պողոսյանի կողմից ներկայացված «Խորհրդային և հետխորհրդային քաղաքն ու նրա զարգացման հիմնախնդիրները 1950–2020-ական թվականներին (Իջևանի քաղաքավերածման և հետխորհրդային փոխակերպման օրինակով)» թեմայով գիտական նախագիծը (համաձայն հավելվածի) համապատասխան «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական ուղղություններին։

2. Համարել նախագիծը արդիական և գիտականորեն հիմնավորված։

3. Երաշխավորել նշված գիտական նախագծի ներկայացումը «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔՆ ՈՒ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1950-2020-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՎԵՐԱԾՄԱՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

1. Համառոտ բնութագիր

Գիտական հետաքրքրությունը խորհրդային քաղաքային տեքստի ձևավորման, դրա գաղափարական և քաղաքական նպատակների հետազոտության շուրջ վերջին տարիներին զգալիորեն աճել է: Քաղաքային տեքստի և նրա բաղադրիչների սինխրոնիկ համակարգի ձևավորման խորհրդային փորձառությունը մինչ օրս պահպանում է իր ուղղորդիչ նշանակությունը քաղաքաշինության և քաղաքային տարածքի նորմավորման գործընթացներում: Խորհրդային քաղաքաշինության հիմքում դրված էին ոչ միայն արտադրական, արդյունաբերական և առևտրասպասարկման տարածքների համաչափ զարգացման սկզբունքները, այլև քաղաքային միջավայրի ներդաշնակության ապահովումը և «քաղաքացու քաղաքի» գաղափարական կոնցեպտի իրականացումը:

Իջևանը Հայաստանի Հանրապետության այն քաղաքներից է, որի զարգացման վրա միաժամանակ ազդեցություն են ունեցել կայսերական, խորհրդային և հետխորհրդային փուլերը՝ ձևավորելով բազմաշերտ քաղաքային կառուցվածք: Ի տարբերություն խոշոր արդյունաբերական կենտրոնների կամ ստանդարտ պլանավորմամբ ձևավորված քաղաքների, Իջևանը ներկայացնում է համակցված և վերլուծական տեսանկյունից առավել ճկուն մոդել: Այն ձևավորվել է որպես բազմաֆունկցիոնալ քաղաք՝ համադրելով վարչական, արդյունաբերական և սոցիալ-մշակութային գործառույթները համեմատաբար փոքր տարածական մասշտաբում: Հետևաբար, Իջևանի քաղաքային փորձառության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել քաղաքային փոխակերպումների օրինաչափությունները և ստացված արդյունքները համադրելի դարձնել Հայաստանի այլ քաղաքների հետ:

Իջևանի քաղաքային տարածության ուսումնասիրության նպատակահարմարությունը պայմանավորված է նաև հետազոտական խմբի տեղակայմամբ (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ), ինչը հնարավորություն է տալիս ապահովել դաշտային հետազոտությունների արդյունավետ կազմակերպում և գիտական շարունակականություն:

Այս համատեքստում կարևոր է ուսումնասիրել Իջևանի քաղաքային տարածության և միջավայրի ձևավորման ինչպես նախնական, այնպես էլ արդի փուլերը, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված մոդելային քաղաքը՝ որպես արդյունաբերական և վարչական կենտրոն, հետխորհրդային շրջանում ենթարկվել է էական իմաստային և ֆունկցիոնալ փոխակերպումների՝ կրելով ինչպես արժեհամակարգային փոփոխությունների, այնպես էլ անկախ պետականության գաղափարական ազդեցությունը:

Որպես հետազոտության օբյեկտ դիտարկվում է խորհրդային և հետխորհրդային Իջևանի քաղաքային տեքստը, իսկ առարկան՝ այդ տեքստի շրջանակներում ձևավորված տնտեսական, հանրային և տարածական միջավայրի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունը:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանում ենք հետևյալ հետազոտական հարցը.

Ինչպիսի՞ օրինաչափություններով է ձևավորվել և փոխակերպվել Իջևանի քաղաքային տեքստը խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում, և ինչպե՞ս են այդ փոխակերպումները արտահայտվում քաղաքային տարածքի ֆունկցիոնալ, սոցիալ-տնտեսական և գաղափարական կառուցվածքում:

Հետազոտական նախագծի նպատակն է ուսումնասիրել Իջևանի քաղաքային տեքստի, ստեղծագործական-արդյունաբերական միջավայրի ձևավորման և փոխակերպման խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում՝ բացահայտելով տարածական, սոցիալ-տնտեսական և գաղափարական փոփոխությունների փոխկապակցվածությունը։

2. Հետազոտական խնդրի վերաբերյալ գիտելիքների ներկա վիճակի մասին վերլուծությունը

Քաղաքային տեքստի ձևավորման խորհրդային և հետխորհրդային փորձառությունը այսօր էլ հանդիսանում է հայ և օտարազգի հեղինակների հետազոտական հետաքրքրության տիրույթում[1]։ Գիտական հետաքրքրությունը խորհրդային քաղաքային տեքստի, դրա գաղափարական և քաղաքական նպատակների շուրջ հատկապես մեծ թափ է ստացել վերջին տարիներին:

Խորհրդային քաղաքաշինության մեջ քաղաքային տեքստի և նրա բաղադրիչների ձևավորման փորձառությունը մինչ օրս պահպանում է իր ուղղորդիչ նշանակությունը քաղաքային տարածության նորմավորման գործընթացում: Սա պայմանավորված է նրանով, որ խորհրդային մոդելում առաջնային էր ոչ միայն արդյունաբերական և առևտրասպասարկման տարածքների զարգացումը, այլև քաղաքային տեքստի ներդաշնակությունը և «քաղաքացու քաղաքի» ձևավորման կոնցեպտը:

Իջևանը որպես նպատակահարմար հետազոտական օբյեկտ. Իջևան հանդիսանում է Հայաստանի այն եզակի քաղաքներից մեկը, որն իր պատմության ընթացքում ուղղակիորեն կրել է կայսերական, խորհրդային և հետխորհրդային գյուղական-քաղաքային փոխակերպումների ազդեցությունը: Այս հանգամանքը թույլ է տալիս քաղաքը դիտարկել որպես քաղաքային տեքստի փոխակերպման «հայկական մոդելի» ձևավորման առանցքային օրինակ:

Վերջին միջգիտակարգային հետազոտությունները փաստում են, որ խորհրդային շրջանի «մոդելային քաղաք-արդյունաբերական-վարչական կենտրոնը» հետխորհրդային

[1] Ավետիսյան Խ., Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, N 11, 1965, 38-52 էջեր; Կոզմոյան Կ., Լենինական, Երևան, 1957, 177 էջ; Կոզմոյան Կ., Կիրովական, Երևան, 1960, 294 էջ; Կոզմոյան Կ., Հրազդան, Երևան, 1986, 136 էջ; Կոզմոյան Կ., Ալավերդի, Երևան, 1966, 226 էջ; Կոզմոյան Կ., Հոկտեմբերյան, Երևան, 1971, 180 էջ; Kopp, Anatole. Town and Revolution: Soviet Architecture and City Planning, 1917–1935. Translated by Thomas E. Burton. New York: George Braziller, 1970; Kotkin, Stephen. Magnetic Mountain: Stalinism as a Civilization. Berkeley: University of California Press, 1995; Harris, Steven Emmett. “Reconstructing Everyday Life: Building, Distributing, Furnishing, and Living in the Separate Apartment in Soviet Russia, 1950s–1960s.” PhD dissertation, University of Chicago, 2003; Boym, Svetlana. Common Places: Mythologies of Everyday Life in Russia. Cambridge, MA: Harvard University Press, 1995; Grant B., The Captive and the Gift: Cultural Histories of Sovereignty in Russia and the Caucasus. Ithaca: Cornell University Press, 2009; Crowley D., Reid S. E. (ed.). Pleasures in Socialism: leisure and luxury in the Eastern Bloc. – Northwestern University Press, 2010; Humphrey C. The unmaking of Soviet life: everyday economies after socialism. – Cornell University Press, 2019.

տարիներին ենթարկվել է խորը փոփոխությունների: Այն իր վրա է կրել արժեհամակարգային տեղաշարժերի և անկախության գաղափարական ազդեցությունը: Հետազոտական դաշտում կարևորվում է հետխորհրդային ժողովրդագրական ճգնաժամի ազդեցությունը քաղաքային ենթակառուցվածքների վրա, ինչպես նաև արդյունաբերական համալիրների կիրառականության անկումն ու տարածքների վերաօգտագործման (re-purposing) խնդիրը:

Թեման խիստ արդիական է, քանի որ քաղաքային տեքստի տեղային դրսևորումների և բովանդակային փոփոխությունների ուսումնասիրությունն ունի թե՛ գիտական, թե՛ հանրային մեծ պահանջարկ: Այստեղ առաջնային է համարվում հանրային գործընթացների փոխազդեցությունը քաղաքային միջավայրի փոխակերպման վրա:

Հետազոտության նորույթը: Ի տարբերություն ընդհանուր քաղաքաշինական հետազոտությունների, սույն նախագիծը առաջարկում է Իջևանի փորձառության տնտեսական, հանրային և քաղաքային միջավայրի առանձնահատկությունների դետալային և միջգիտակարգային հետազոտություն: Այն համադրում է պատմագիտական նյութերը ժամանակակից հասարակական գիտությունների գիտաչափական նորմերի հետ:

3. Ծրագրի նպատակները և խնդիրները

Հետազոտական նախագծի **նպատակն** է համակողմանիորեն, պատմագիտական և միջգիտակարգային հետազոտական նյութերի համադրությամբ ուսումնասիրել խորհրդային և հետխորհրդային Իջևանի **ստեղծագործական արդյունաբերական** միջավայրի՝ քաղաքային տարածության ձևավորման և փոխակերպման առանձնահատկությունները:

Այս նպատակին հասնելու համար դրվել են հետեւյալ խնդիրները.

- **Բացահայտել** Իջևանի քաղաքային տարածության և ենթակառուցվածքների ձևավորման, տարածական համաչափության հիմնական առանձնահատկությունները:
- **Հետազոտել** քաղաքային արդյունաբերականացման հիմնական միտումներն ու բնակչության մասնագիտական պատրաստումն արդյունաբերական գործունեությանը:
- **Կարևորել** քաղաքային բնակչության կրթական, մասնագիտական փոխակերպումը և նրանց գործունեության ստանդարտացումը ստեղծագործական արդյունաբերական միջավայրին:
- **Ցույց տալ** արդյունաբերականացման խնդիրների լուծման խորհրդային փորձառությունը, արդյունաբերական համալիրների աշխատանքի արդյունավետությունն ու ազդեցությունը քաղաքային տարածության և հանրային միջավայրի վրա:
- **Ուսումնասիրել** հետխորհրդային Իջևանի քաղաքային տարածքի և արդյունաբերական համալիրների փոխակերպման և այլացման հիմնական միտումները՝ շեշտը դնելով հանրային և արդյունաբերական տարածքի իմաստային, բովանդակային և կիրառականության այլացման վրա:

4. Հետազոտական նախագիծը

Իջևանի քաղաքային միջավայրի ձևավորումը խորհրդային տարիներին չէր սահմանափակվում սոսկ շինությունների կառուցմամբ: Այն դիտարկվում էր որպես

«քաղաքային տեքստի» ստեղծում, որտեղ յուրաքանչյուր ենթակառուցվածք ուներ իր սիմվոլիկ և ֆունկցիոնալ դերը: Նախագիծը կուսումնասիրի, թե ինչպես է իրականացվել արտադրական, բնակելի և հանրային տարածքների համաչափ զարգացումը: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի «քաղաքացու քաղաքի» կոնցեպտին, որտեղ ներդաշնակությունը դիտարկվում էր որպես սոցիալիստական կենցաղի պարտադիր պայման: Ճարտարապետի ներգրավմամբ կվերականգնվեն այն գծագրական մոդելները, որոնք ցույց են տալիս քաղաքի տարածական նորմավորման սկզբունքները:

Արդյունաբերական միջավայրը որպես ստեղծագործական տարածք. Իջևանի արդյունաբերականացումը (գորգագործություն, բենտոնիտի արտադրություն և այլն) դիտարկվում է ոչ միայն տնտեսական, այլև մշակութային տեսանկյունից: Հետազոտությունը կվերլուծի բնակչության մասնագիտական պատրաստման և ստանդարտացման գործընթացը, որը նպատակ ուներ մարդուն ինտեգրել «ստեղծագործական արդյունաբերական միջավայրին»: Սա թույլ կտա հասկանալ, թե ինչպես էր խորհրդային համակարգը ձևավորում քաղաքային նոր ինքնություն՝ հիմնված աշխատանքի և ստեղծարարության համադրության վրա:

Հետխորհրդային փոխակերպում և իմաստային այլացում: Անկախության շրջանում Իջևանի քաղաքային մոդելը ենթարկվել է լուրջ իմաստային և ֆունկցիոնալ փոփոխությունների: Նախագծի այս մասը կկենտրոնանա արդյունաբերական հսկաների կիրառականության անկման և դրանց տարածքների «այլացման» վրա: Կուսումնասիրվեն արժեհամակարգային փոփոխությունները, որոնք հանգեցրել են քաղաքային ենթակառուցվածքների նորովի ընկալմանը կամ դրանց դեգրադացիային: Ժողովրդագրական ճգնաժամի համապատկերում կկատարվեն կանխատեսումներ քաղաքի հետագա զարգացման վերաբերյալ:

5. Առկա նյութատեխնիկական ռեսուրսները: Գիտական մեթոդները

Այս հետազոտությունը հիմնված է **միջգիտակարգային սինթեզի** վրա, որտեղ դասական պատմագիտական մեթոդները համադրվում են ճարտարապետական վիզուալիզացիայի և սոցիալ-մշակութային անտրոպոլոգիայի գործիքակազմի հետ:

Նախագծի մեթոդաբանությունը կառուցված է **միջգիտակարգային կոնվերգենցիայի** սկզբունքով, որը թույլ է տալիս քաղաքային միջավայրը դիտարկել որպես բարդ, բազմաշերտ համակարգ: Մեթոդաբանության առանցքը քաղաքը որպես **նշանային համակարգ (Urban Semiotics)** ընկալելն է: Սա թույլ է տալիս հետազոտել ոչ միայն շենքերի ֆիզիկական առկայությունը, այլև դրանց մեջ դրված գաղափարախոսական կոդերը: Իջևանի ճարտարապետական լուծումները կվերլուծվեն որպես խորհրդային «մոդելային քաղաքի» պատում (narrative), որտեղ գործարանային շենքերը, քանդակների այգին և բնակելի թաղամասերը փոխկապակցված տեքստի մասեր են:

Նախագծի իրականացման ընթացքում կիրառվելու են ժամանակակից արհեստական բանականության կողմից առաջարկվող նորարարություններն ու հնարավորությունները: Ճարտարապետի ներգրավմամբ կկիրառվի **հակադարձ նախագծման (Reverse Engineering)**

մեթոդը։ Արխիվային 2D հատակագծերի հիման վրա կստեղծվեն 3D վիզուալիզացիաներ, որոնք թույլ կտան գիտականորեն ճշգրիտ վերականգնել քաղաքի սինխրոնիկ տեսքը 1960-70-ական թթ. և համադրել այն այսօրվա դեգրադացված կամ փոխակերպված վիճակի հետ։

Պետք է նշել, որ Իջևանի փորձառությունը կհամադրվի հետխորհրդային այլ «միջնակարգ քաղաքների» (secondary cities) տրանսֆորմացիոն մոդելների հետ (օրինակ՝ Արևելյան Եվրոպայի կամ Միջին Ասիայի նմանատիպ քաղաքների)։ Սա թույլ կտա ձևակերպել քաղաքային տեքստի փոխակերպման **«հայկական մոդելը»**։

Այս համակցված մեթոդաբանությունը թույլ է տալիս նախագիծը ներկայացնել որպես **Digital Humanities (Թվային հումանիտար գիտություններ)** ոլորտի առաջամարտիկ փորձ Հայաստանում։ Այն ոչ միայն արձանագրում է պատմությունը, այլև ստեղծում է քաղաքի զարգացման **կանխատեսելի մոդելներ**՝ հիմնված պատմական և տարածական տվյալների վրա։

Հետազոտության մեջ կիրառվելու են հետևյալ առանցքային մեթոդները, որոնք ապահովում են արդյունքների հավաստիությունն ու համադրելիությունը միջազգային չափանիշներին.

- Սինխրոնիկ և դիախրոնիկ վերլուծություն (Synchronous and Diachronic Analysis)։ Թույլ կտա ուսումնասիրել Իջևանի քաղաքային տեքստը և՛ որոշակի ժամանակային կտրվածքում (օրինակ՝ 1960-ականների արդյունաբերական վերելքի փուլում), և՛ ժամանակային դինամիկայի մեջ (անցումը կայսերականից խորհրդային և հետխորհրդային շրջափուլերի)։
- Քաղաքային հնագիտություն և իմաստային տեքստի վերլուծություն (Urban Semiotics)։ Քաղաքը դիտարկվում է որպես «կենդանի տեքստ»։ Մեթոդը կիրառվում է բացահայտելու համար ճարտարապետական ձևերի և գաղափարական բովանդակության միջև կապը, հատկապես «ստեղծագործական արդյունաբերական միջավայրի» համատեքստում։
- Բանավոր պատմության մեթոդ (Oral History)։ Իրականացվելու են խորքային հարցազրույցներ Իջևանի նախկին արդյունաբերական հսկաների (գորգագործական, բենտոնիտի գործարաններ) աշխատակիցների հետ՝ վեր հանելու համար «մարդկային կապիտալի» ստանդարտացման և սոցիալական ինքնության փոխակերպման անտեսանելի շերտերը։
- Ճարտարապետական վերակազմության մեթոդ (Architectural Reconstruction)։ Սա նախագծի ուժեղ կողմն է։ Ճարտարապետի ներգրավմամբ, արխիվային հատակագծերի հիման վրա, կիրառվելու է 3D մոդելավորում՝ վերականգնելու համար կորսված կամ ձևափոխված քաղաքային տարածությունները։

Նախագծի իրականացման համար ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը տրամադրում է ժամանակակից լաբորատոր ենթակառուցվածք, որը ներառում է.

- **Թվային լաբորատորիա** (Digital Research Hub)։ Հագեցած բարձր արտադրողականությամբ համակարգիչներով, որոնք անհրաժեշտ են ծավալուն գծագրական աշխատանքների, GIS (Աշխարհագրական տեղեկատվական

համակարգեր) քարտեզագրման և ճարտարապետական վիզուալիզացիայի ծրագրային փաթեթների (AutoCAD, Revit, 3ds Max) համար:

- **Արխիվային հասանելիություն և տվյալների բազաներ**: Պայմանավորվածություններ ՀՀ Ազգային արխիվի և Իջևանի տեղական կառույցների հետ՝ բացառիկ նյութերի, քաղաքաշինական պլանների և լուսանկարչական վավերագրերի ուսումնասիրման համար:
- **Դաշտային հետազոտական սարքավորումներ**: Բարձրակարգ թվային ձայնագրիչներ հարցազրույցների համար, ինչպես նաև գեոդեզիական և չափագրական գործիքներ (լազերային հեռաչափեր, դրոններ)՝ քաղաքային միջավայրի ճշգրիտ ֆոտոգրամետրիա իրականացնելու համար:

6. Օրացուցային պլան

Հաշվետու ժամանակահատված	Նախատեսվող աշխատանքներ
1.1 առաջին եռամսյակ	1. Նախապատրաստական աշխատանքներ՝ հետազոտության աղբյուրագիտական հկառուցվածքային մշակում: 2. Կատարել հետազոտական աշխատանք՝ առանձնացնելով առաջնային և երկրորդային սկզբնաղբյուրները, արխիվային նյութերն ու մամուլի հոդվածները, աշխատանքի տանել թեմայի տեսական շրջանակի և հետազոտական գրականության ուսումնասիրության շուրջ: 3. Կահավորել լաբորատորիան անհրաժեշտ տեխնիկական նյութերով՝ ծրագրային փաթեթներով, համակարգիչներ և ձայնագրման տեխնիկական միջոցներ: 4. Պատրաստել մինի ձայնագրման ստուդիա, որտեղ պետք է պատրաստվեն ռիլեր և տարաբնույթ տեսանյութեր՝ նախատեսված հետազոտական խմբի արդյունքների հանրայնացման համար: 5. Արդյունքների հանրայնացման գիտամատչելի տարբերակների ստեղծում (սոցկայքերում փոստեր, ռիլլեր և այլն) և հանրային բանախոսության կազմակերպում՝ նախատեսված 50 անձի համար:
1.2 երկրորդ եռամսյակ	1. Կատարել հետազոտական աշխատանք՝ առանձնացնելով առաջնային և երկրորդային սկզբնաղբյուրները, արխիվային նյութերն ու մամուլի հոդվածները: 2. Դաշտային հետազոտությունների կազմակերպում, շրջայցեր թաղամասեր, նախկին արդյունաբերական տարածքներ, լուսանկարների համեմատական վերլուծություն: 3. Այս փուլի արդյունքներն ամփոփել և պատրաստել գիտական զեկուցում-հոդված, ներկայացնել տպագրության ԲՈԿ-ի կողմից երաշխավորված ամսագրերից մեկում: 4. Մասնակցել միջազգային գիտաժողովի՝ Իջևանի քաղաքային տարածության ձևավորման առանձնահատկությունների շուրջ ընտրված թեմայով: 5. Կազմել հաշվետվություն, հանդես գալ հանրային բանախոսությամբ, որին կմասնակցեն թվով 40 համալսարանականներ: Արդյունքները կներկայացվեն մամուլի միջոցներով՝ տեղական ՏՎ-ով և համալսարանական կայքէջերով:

1.3 երրորդ եռամսյակ	1. Գիտական և արխիվային նյութերի ուսումնասիրության շարունակություն։ 2. Դաշտային հետազոտությունների իրականացում, խոր հարցազրույցների (թվով 20 քաղաքաբնակի հետ) անցկացում։ 3. Իջևանի քաղաքային տարածության և ենթակառուցվածքների ձևավորման, տարածական համաչափության հիմնական առանձնահատկությունների տիպաբանական դասակարգում, համեմատություն Խորհրդային Հայաստանի քաղաքային այլ փորձառությունների հետ։ 4. Եռամսյակային հաշվետվության կազմում, արդյունքների հանրայնացումը։ 5. Մասնակցություն միջազգային գիտաժողովի։
1.4 չորրորդ եռամսյակ	1. Գիտական և արխիվային նյութերի ուսումնասիրության շարունակություն։ 2. Դաշտային հետազոտությունների իրականացում, խոր հարցազրույցների (թվով 30 քաղաքաբնակի հետ) անցկացում։ 3. Հետազոտել քաղաքային արդյունաբերականացման հիմնական միտումներն ու բնակչության մասնագիտական պատրաստումն արդյունաբերական գործունեությանը, նմանություններն ու տարբերությունները քաղաքային այլ միջավայրերի համեմատությամբ։ 4. Բնակչության ներսում այլէթնիկ խմբերի ներկայացուցիչների գործունեությունը, մասնագիտական ուղղվածությունը և ազդեցությունները քաղաքային միջավայրի ձևավորման վրա։ 5. Տարեկան հաշվետվության կազմում, մասնակցություն միջազգային գիտաժողովի, գիտական հոդվածի ներկայացում ԲՈԿ ամսագրերից որևէ մեկին։
2.1 առաջին եռամսյակ	1. Արխիվային նյութերի ուսումնասիրության շարունակականության ապահովում։ 2. Հետազոտել Իջևանի քաղաքային բնակչության կրթական, մասնագիտական փոխակերպումը, այլ բնակավայրերից արդյունաբերական համալիրների աշխատակազմերի համալրման առաջնահարթությունները, նորահաստատ քաղաքային բնակչության ազդեցությունը քաղաքային միջավայրի գաղափարական ստանդարտացման վրա։ 3. Բացահայտել քաղաքային բնակչության գործունեության ստանդարտացումը ստեղծագործական արդյունաբերական միջավայրին, դրան նպաստող և կանխարգելող հանգամանքները։ 4. Հրապարակային դասախոսությունների կազմակերպում քաղաքային ինքնակառավարման մարմնի և նրան ենթակա համայնքային կառույցների աշխատակիցների համար (թվով 120 համայնքային աշխատակիցների մասնակցությամբ)։ 5. Եռամսյակային հաշվետության ներկայացում, հոդվածի ներկայացում ՄԳՇ ամսագրում։

2.2 երկրորդ եռամսյակ	1. Աշխատանքի շարունակականություն արխիվային նյութի հետ։ Իջևանի քաղաքապետարանի և տեղական արխիվների մշակում։ 2. Աշխատանքի հարցազրույցների նյութերի գիտահենության, քաղաքաբնակների փորձառությունների և հուշերի գիտական կիրառականության շուրջ։ 3. Ուսումնասիրել ստեղծագործական արդյունաբերության դրսևորումները այլէթնիկ միջավայրերում։ 4. Հետազոտել Խորհրդային այլ քաղաքային միջավայրերի ձևավորման, կայացման և փոխակերպման առանձնահատկությունները և պրոեկտել հայկական մոդելի վրա։ 5. Եռամսյակային հաշվետվության ներկայացում, մասնակցություն միջազգային գիտաժողովի։
2.3 երրորդ եռամսյակ	1. Քաղաքաշինական հատակագծերի, լուսանկարների թվայնացում, տվյալների բազայի ստեղծում։ 2. Դաշտային աշխատանքների շարունակում, հարցվողների նույնականացում։ 3. Ուսումնասիրել Իջևանի բնակչության ժողովրդագրական շարժերը, արդյունաբերականացման ազդեցությունը բնակչության աճի վրա։ 4. Եռամսյակային հաշվետվության կազմում, հանրամատչելի նյութերի հրապարակում։ Ստեղծված տեղեկավտական նյութի շուրջ հրապարակային բանախոսության կազմակերպում Տավուշ ՏՎ-ի հետ։ 5. Աշխատանքներ նոր հոդվածի շուրջ։
2.4 չորրորդ եռամսյակ	1. Քաղաքաշինական հատակագծերի, լուսանկարների թվայնացում, տվյալների բազայի ստեղծում։ 2. Դաշտային աշխատանքների շարունակում, հարցվողների նույնականացում։ 3. Իջևանի քաղաքային տարածության խնդիրների շուրջ խորհրդային շրջանի բնակչության կլոր-սեղան քննարկման կազմակերպում՝ նախատեսելով երեք բանախոսություն և քննարկում։ 30 քաղաքաբնակի մասնակցություն։ 4. Տարեկան հաշվետվության կազմակերպում, ներկայացում։ 5. ՄԳՇ հոդվածի ուղարկում՝ հրատարակչություն։
3.1 առաջին եռամսյակ	1. Խորքային հարցազրույցների անցկացում (≥40 հոգի)։ 2. 1960-70-ականների հատակագծերի հակադարձ նախագծում։ 3. Ուսումնասիրել արդյունաբերականացման ուղղակի ազդեցությունը քաղաքաշինության և քաղաքային պլանավորման վրա։ 4. Մասնակցել միջազգային գիտաժողովի, ինչպես նաև արդյունքների, փոքրաձալավ հոդվածի ներկայացում ԲՈԿ ամսագրերից մեկում։ 5. Աշխատանքներ ՄԳՇ հերթական հոդվածի վրա, արդյունքների հրապարակում սոցկայքերում և այլ տեղեկատվական միջոցներով։

3.2 երկրորդ եռամսյակ	1. Խորքային հարցազրույցների նյութի ուսումնասիրություն։ 2. 3D վիզուալիզացիաների ստեղծում (AutoCAD, Revit, 3ds Max)։ 3. Ուսումնասիրել արդյունաբերական համալիրների աշխատանքի արդյունավետությունը, աշխատակիցների մասնագիտական և մշակութային կարողությունների զարգացման ուղղված քայլերը։ 4. Աշխատանքներ ՄԳՇ հերթական հոդվածի վրա, արդյունքների հրապարակում սոցկայքերում և այլ տեղեկատվական միջոցներով։ 5. Եռամսյակային հաշվետվության կազմում։
3.3 Երրորդ եռամսյակ	1. Խորքային հարցազրույցների նյութի ուսումնասիրություն։ 2. 3D վիզուալիզացիաների ստեղծում (AutoCAD, Revit, 3ds Max)։ 3. Ուսումնասիրել արդյունաբերականացման ազդեցությունը քաղաքաշինական պլանավորման վրա՝ ըստ տասնամյակների։ 4. Աշխատանքներ ՄԳՇ հերթական հոդվածի վրա, արդյունքների հրապարակում սոցկայքերում և այլ տեղեկատվական միջոցներով։ 5. Եռամսյակային հաշվետվության կազմում։
3.4 Չորրորդ եռամսյակ	1. 3D վիզուալիզացիաների ստեղծում (AutoCAD, Revit, 3ds Max)։ 2. Առանձնացնել քաղաքային հանրային տարածքի ձևավորման իջևանյան առանձնահատկությունները, դասակարգել և համեմատել այլ քաղաքային փորձառությունների հետ։ 3. ՄԳՇ հոդվածի ներկայացում խմբագրություն։ 4. Եռամյա հաշվետվության ձևավորում, համակարգում, քանակական և որակական արդյունքների ստանդարտավորում։
4.1 առաջին եռամսյակ	1. 3D վիզուալիզացիաների ստեղծում (AutoCAD, Revit, 3ds Max) 2. GIS քարտեզագրում (փոփոխությունների տարածական շերտեր)։ 3. Հետազոտել հետխորհրդային քաղաքային տարածության փոխակերպման իջևանյան մոդելը, առանձնացնել առանձնահատկությունները։ 4. Հերթական ՄԳՇ հոդվածի վրա աշխատանք։ 5. Եռամսյակային հաշվետվության կազմում, մասնակցությունը միջազգային գիտաժողովի։
4.2 Երկրորդ եռամսյակ	1. GIS քարտեզագրում (փոփոխությունների տարածական շերտեր)։ 2. Ուսումնասիրել հետխորհրդային շրջանում իջևանի արդյունաբերական և հանրային տարածությունների վերաօգտագործման խնդիրները։ 3. Իջևանի փորձառությունը համեմատել Արևելյան Եվրոպայի նմանատիպ քաղաքների հետ, առանձնացնել նույնություններն ու տարբերությունները։ 4. Հերթական ՄԳՇ հոդվածի վրա աշխատանք։ 5. Եռամսյակային հաշվետվության կազմում, մասնակցությունը միջազգային գիտաժողովի։

4.3 երրորդ եռամսյակ	1. GIS քարտեզագրում (փոփոխությունների տարածական շերտեր)։ 2. Արդյունաբերական տարածքների վերաօգտագործման խնդրի ուսումնասիրություն այլ երկրների օրինակով։ 3. Իջևանի փորձառությունը համեմատել Վրաստանի նմանատիպ քաղաքների հետ։ 4. Հերթական ՄԳՇ հոդվածի ներկայացում խմբագրություն։ 5. Եռամսյակային հաշվետվության կազմում։
4.4 չորրորդ եռամսյակ	1. GIS քարտեզագրում (փոփոխությունների տարածական շերտեր)։ 2. Ֆոտոգրամետրիա դրոններով (ներկա վիճակի փաստագրում)։ 3. Համեմատական վերլուծության ենթարկել Արևելյան Եվրոպայի, Վրաստանի և ՀՀ քաղաքների խորհրդային և հետխորհրդային փոխակերպման հիմնական միտումները։ 4. Քաղաքային միջավայրի ձևավորման և փոխակերպման Հայկական մոդելի տեսական հիմքերի ուսումնասիրություն։ 5. ՄԳՇ հերթական հոդվածի ներկայացում խմբագրություն, եռամսյակային հաշվետվության ներկայացում։
5.1 առաջին եռամսյակ	1. Ֆոտոգրամետրիա դրոններով (ներկա վիճակի փաստագրում)։ 2. Համեմատական վերլուծության ենթարկել Արևելյան Եվրոպայի, Վրաստանի և ՀՀ քաղաքների խորհրդային և հետխորհրդային փոխակերպման հիմնական միտումները։ 3. Ուսումնասիրել հետխորհրդային շրջանում ազգային գաղափարախոսությունների ազդեցությունը հանրային տարածքների, կրոնածիսական համալիրների փոխակերպման և վերօգտագործման վրա։ 4. Եռամսյակային հաշվետվության ձևավորում։
5.2 երկրորդ եռամսյակ	1. Ուսումնասիրել հետխորհրդային շրջանում ազգային գաղափարախոսությունների ազդեցությունը քաղաքային հուշարձանների փոխակերպման և վերօգտագործման վրա։ 2. Կատարված հետազոտությունների ամբողջացում մենագրության տեսքով։ 3. Միջազգային գիտաժողովի կազմակերպում Իջևանում։ 4. ՄԳՇ հերթական հոդվածի ներկայացում խմբագրություն, եռամսյակային հաշվետվության ներկայացում։ 5. Միջազգային դրամաշնորհային ծրագրի հայտնի ներկայացում։
5.3 երրորդ եռամսյակ	1. Ամբողջացնել ճարտարապետական և քաղաքատարածական հետազոտությունների արդյունքները։ 2. Արդյունքների ներկայացում սոցկայքերի, ռիլերի և հեռուստատեսության միջոցով։ 3. Կատարված հետազոտությունների ամբողջացում մենագրության տեսքով և տպագրություն։ 4. Ուսումնասիրության համար ներքին արխիվի ձևավորում՝ հետազոտական խմբի ուսումնասիրությունների շարունակականությունն ապահովելու համար։ 5. Եռամսյակային հաշվետվության ներկայացում։

5.4 չորրորդ եռամսյակ	1. Ամբողջացնել ճարտարապետական և քաղաքատարածական հետազոտությունների արդյունքները։ 2. Արդյունքների ներկայացում սոցկայքերի, ռիլերի և հեռուստատեսության միջոցով։ 3. Մենագրության շնորհանդեսի կազմակերպում Երևանում և Իջևանում։ 4. Մենագրության թարգմանություն և հրատարակություն։ 5. Ամփոփիչ հաշվետվության կազմում և ներկայացում։

7. *Խմբի ձեռքբերումները տվյալ ոլորտում, օտարերկրյա գործընկերոջ համապատասխանությունը Նախագծի նպատակներին*

Խմբի ղեկավար Միխայիլ Իլչենկոն ուսանել է սոցիոլոգիա և քաղաքագիտություն Եկատերինբուրգի Ուրալի դաշնային համալսարանում: 2011 թվականին ստացել է դոկտորի կոչում Եկատերինբուրգի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտից և ավելի ուշ աշխատել է այնտեղ որպես հետազոտող և ավագ գիտաշխատող: Միխայիլ Իլչենկոն աշխատում է հասարակական գիտությունների և մշակութային ուսումնասիրությունների ոլորտում և հետազոտություններ է իրականացրել մոդեռնիստական քաղաքային ժառանգության վերաբերյալ Լեհաստանում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Չեխիայում, Իսրայելում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր: Նա ներգրավված է մի շարք միջազգային ակադեմիական և կրթական նախագծերում, որոնք ուսումնասիրում են Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների մոդեռնիստական քաղաքային տարածքների փոփոխվող ընկալումներն ու գործառույթները:

Խմբի համաղեկավար Վլադիմիր Պողոսյանը շուրջ հինգ տարի զբաղվում է Իջևանի քաղաքային տարածության ձևավորման, փոխակերպման բազմազան խնդիրների ուսումնասիրությամբ: Այդ ուղղությամբ ղեկավարել է երկու ծրագիր՝ «**Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-1970-ական թվականներին**» և **EU4Culture /ICDS/CHSG-05 «Զարթոնք Իջևանի»** դրամաշնորհային ծրագրերը, հրատարակել գիտական հոդվածներ, իրականացրել հանրային բանախոսություններ և դասախոսություններ:

8. Խմբի զարգացման հեռանկարները (ռիսկերը և հնարավորությունները)

Այս պահին խմբի անդամները շարունակում են իրենց հետազոտական աշխատանքներ իրականացնել գիտական տարբեր հիմնախնդիրների լուսաբանման ու ուսումնասիրության շուրջ, իրականացնում են դասախոսական աշխատանք: Խումբն ապագայում նախատեսում է ձևավորել տարածաշրջանային հետազոտության կենտրոն-ինստիտուտ, որտեղ կիրականացվեն տարածաշրջանային հիմնախնդիրների ուսումնասիրություն, կոնֆերանսներ, իսկ արդյունքները հրապարակել գիտական հոդվածների և կոլեկտիվ մենագրությունների տեսքով: Հատկապես կարևորում են քաղաքային միջավայրի ձևավորման և առօրեական գործընթացների հետազոտությունը, մի ուղղություն, որ կարիք ունի հետազոտության և նորովի մեկնության:

Միակ ռիսկը ժամանակացույցի հստակ պահպանումից շեղումն ու հրատարակության գործընթացի երկարումն է, որի ընթացքում հնարավոր է գիտական հոդվածի տպագրությունը հետաձգվի: Այլ ռիսկեր չենք կանխատեսում և հանձնառու ենք պատշաճ, ժանամանակին հետազոտական ծրագրի իրականացմանը:

9. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները

Նախագծի իրականացման 60 ամիսների ընթացքում ակնկալվում է հասնել հետևյալ քանակական ցուցանիշներին. հրատարակել առնվազն 5 գիտական հոդված ՄԳՇ-ում (Scopus/WoS Core Collection), որոնցից 2-ը՝ Q1, 2-ը՝ Q2 քառորդներում, ինչպես նաև 2 հոդված ԲՈԿ-ի երաշխավորված ամսագրերում: Լրացուցիչ կհրատարակվի 1 գիտական մենագրություն (հայերեն և անգլերեն թարգմանությամբ): Կներկայացվի առնվազն 1 միջազգային դրամաշնորհի հայտ:

Դաշտային աշխատանքների շրջանակում կանցկացվեն առնվազն 40 խորքային հարցազրույցներ, կթվայնացվեն ավելի քան 100 քաղաքաշինական հատակագծեր և լուսանկարներ: Կստեղծվեն առնվազն 10 3D վիզուալիզացիաներ (AutoCAD, Revit, 3ds Max) և 5 GIS քարտեզներ, կիրականացվի դրոնային ֆոտոգրամետրիա՝ առնվազն 50 օբյեկտի ընդգրկմամբ: Նախատեսվում է մասնակցություն 8 միջազգային գիտաժողովների, 1 միջազգային գիտաժողովի կազմակերպում Իջևանում, 4 հանրային բանախոսություն (ընդհանուր 260 ունկնդիր), 1 կլոր-սեղան քննարկում (30 մասնակից) և մենագրության շնորհանդեսի կազմակերպում Երևանում և Իջևանում:

Որակական առումով նախագիծն առանձնանում է գիտական նորույթով (առաջին համակողմանի ուսումնասիրությունը խորհրդային և հետխորհրդային քաղաքային տեքստի փոխակերպման «հայկական մոդելի» ձևակերպմամբ), միջգիտակարգային ինտեգրմամբ (պատմություն, ճարտարապետություն, GIS, բանավոր պատմություն): Այն նպաստելու է խմբի որակական կողմերի զարգացմանը, միջազգային համագործակցությանը և գիտական հաղորդակցություն ընդլայնմանը՝ ապագայում նպաստելով գիտական խմբի շուրջ նոր կենտրոն-ինստիտուտի ձևավորմանը:

10. Օգտագործված գրականության ցանկը

1. ՀՀ Ազգային արխիվի Իջևանին վերաբերող ֆոնդեր։
2. ՀՀ Ազգային արխիվի Վանաձորի մասնաճյուղի Իջևանին վերաբերող ֆոնդեր։
3. Իջևանում հրատարակված թերթերի (Իջևանի կոլտնտեսական, Լենինյան ուղիով, Իջևան) համարներ մատենագիտական ուսումնասիրություն։
4. Ավետիսյան Խ., Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, N 11, 1965, 38-52 էջեր։
5. Կոզմոյան Կ., Լենինական, Երևան, 1957, 177 էջ;
6. Կոզմոյան Կ., Կիրովական, Երևան, 1960, 294 էջ։
7. Կոզմոյան Կ., Հրազդան, Երևան, 1986, 136 էջ։
8. Կոզմոյան Կ., Ալավերդի, Երևան, 1966, 226 էջ։
9. Կոզմոյան Կ., Հոկտեմբերյան, Երևան, 1971, 180 էջ։
10. Պողոսյան Վ., Քաղաքային տարածության փոխակերպումները ժամանակակից Իջևանի օրինակով //History and Culture, 2024, T. 21, №. 2. 338-352 էջեր։
11. Պողոսյան Վլադիմիր, Տավուշի մարզի բնակչության ժողովրդագրական իրավիճակը և բնական աճի միտումները, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա., 2022, 382-392 էջեր։
12. Պողոսյան Վ., Մկրտումյան Ա., Իջևանի ժողովրդագրական պատկերը 1920-1930-ական թվականներին, Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու – 2022 (Ը), 257-271 էջեր:
13. Kopp, Anatole. Town and Revolution: Soviet Architecture and City Planning, 1917–1935. Translated by Thomas E. Burton. New York: George Braziller, 1970.
14. Kotkin, Stephen. Magnetic Mountain: Stalinism as a Civilization. Berkeley: University of California Press, 1995.
15. Harris, Steven Emmett. “Reconstructing Everyday Life: Building, Distributing, Furnishing, and Living in the Separate Apartment in Soviet Russia, 1950s–1960s.” PhD dissertation, University of Chicago, 2003.
16. Boym, Svetlana. Common Places: Mythologies of Everyday Life in Russia. Cambridge, MA: Harvard University Press, 1995.
17. Grant B., The Captive and the Gift: Cultural Histories of Sovereignty in Russia and the Caucasus. Ithaca: Cornell University Press, 2009.
18. Crowley D., Reid S. E. (ed.). Pleasures in Socialism: leisure and luxury in the Eastern Bloc. – Northwestern University Press, 2010.
19. Humphrey C. The unmaking of Soviet life: everyday economies after socialism. – Cornell University Press, 2019.
20. Аванесов С. С. 2018, Сакральная топика русского города. Собор и ворота // ПРАΞНМА. Проблемы визуальной семиотики, № 1 (14), стр. 70-92.
21. Аванесов С. С., Федотова Н. Г. 2022, Город: в поисках идентичности / С. С. Аванесов, Н. Г. Федотова. СПб.: Алетейя, 408 стр.
22. Лотман Ю. М. 2000, Семиосфера. С.-Петербург: «Искусство-СПБ», 704 стр.
23. Лотман Ю. М. 1984. Символика Петербурга и проблемы семиотики города // Ученые записки Тартуского государственного университета. Вып. 664. Тарту, стр. 30-45.
24. Иконников А. В. 2006, Пространство и форма в архитектуре и градостроительстве. Москва, 352 стр.